մանաւանդ քաղաքիս փուռերուն 15 չափ ցորեան ալ անբաւական նկատելով, ապրիլի 15-ին մէկտեղ Ժողովելով միութիւն մը կը ինքեն մէջերնին՝ ձեռնարկ մը ընելու այս խնդրոյ մասին: Ապրիլ 15-ին առաւօտուն կանուխ 'ի դիմաց հասարակութեան յանկարծ մուտներին կաղդարարէ որ ամբողջ խանութներ զոցուին. այս հրամանն 'ի գործ դրուելէն ետք, Հայ և Տաճիկ հասարակութիւնն միահամուռ քաղաքին դուրս տաճկաց գերեզմանատունն կը խռնին, և անդ երեք ժամու չափ խորհրդակցելով միմեանց հետ, կը որոշեն յախուռն կերպիւ կառավարութեան ապարանքն կոխել: Եւ ահա յանկնկալս ժողովրդեան ձայնն քաղաքս դղրդեց. ամէն որ վազեցաւ դէպ. արդէն խուժանն կառավարութեան դուռը յարձակեցաւ, և ջարդին կուգենք, ցորենս կաղաղակէր: Կառավարութեան պաշտօնեայք կը պատասխանեն թէ խորհուրդ ընենք և այնպէս որոշում տանք ձեր խնդրոյն: Ուստի կառավարիչ փաշան, Տարոնոյ ընդհ. դատախազ Վահեմ Ցաղոր էֆ. Տիրացուեան և Դաւին, զօրաց հրամանատար փաշային ապարանքն կերթան, և Ժողովրդեան բազմութիւնն ալ ասոնց ետևէն:

Հասարակութիւնն (2–3000 ի չափ) հրամանատար փաշայի օթեւանին առջև հասնելով՝ դարձեալ ըստ՝ առաջնոյ ցորեն կուզենք կը պոռան. և երբ մէկ ժամու չափ սպասելով պատասխան մը չենն առնուր, կրաֆին ամէնքն մէկէն հրամանատարի ապարանքն քարեր արձակել այնպէս սաստիկ կերպով, որ պատուհաններու բոլոր ապակիներն ջարդվեցան և մէջ եղածներն ալ ներսի սենեակներ փախան: Ժողովուրդը զայրացմամբ դէպի զօրանոց երթալու ատեն, չափ մը ցորեան կը պատհի, զոր նոյն միջոցին ցիրուցան կրենն, այս ատեն սարսափելի անձրև կը տեղար: Ժողովուրդը երկու ժամէն ետքը կը մեկնի պատասխան կուզենք ըսելով, և անկէ ուղղակի կերթայ Մուֆթիին վնտռելու, որ մզկիթին մէջ տաճիկ աշակերտաց կը դասախօսէր: Մուֆթիին վանդը նկատելով, մզկիթին դուռը կը զոցէ, բազմութիւնն կաղաղած կը սկսի մզկիթին պատերն քակել և քարեր արձակել. Մուֆթիին

տանիք տարել է Աւգանիստանի մայրաքաղաքի մէջ. այդ մէկ ու կէս դարուայ ընթացքում մեր եկեղեցականները նրանց մասին ոչինչ տեղեկութիւն չեն ունեցել. նրանք մոռացված են եղել որպէս ազգի ընդհանրութիւնից, նոյնպէս և ժողովրդի հովիւներից. Բայց հաւատարիմ իր հայրենի կրօնին, հայը չնեղել է այնտեղ իր համար եկեղեցի, և պաշտպանելով բոլոր հալածանքների դէմ, սկսել է պաշտել իր կրօնը: Անցել են նարեւաբոր տարիներ, տարաշխատեալ ժողովրդի հետ եղած քահանաները վախճանվել են, և նա մնացել է զուրկ բոլոր հոգեւոր մխիթարութիւններից.—Ննջածները մնացել են առանց մկրատութեան, եկեղեցին մնացել է առանց ժամի և պատարագի, ննջեցեալները թաղվել են առանց քահանայի. Այնուհետև հայոց եկեղեցականներից ոչ ոք ոտք չէ կոխել այդ երկրի վրա:

Անգլիացի մտիկնորը լսում է, որ Աւգանիստանի խաւարի մէջ հայազգի քրիստոնեաներ են գտնվում. Նա հայ եկեղեցականի նման անփոյթ, անհոգ և երկչոտ չէ. Նա որոնում է և գտնում է հայերին: 200 ընտանիքից մնացել են մի քանի հոգի միայն. մկրտում է նրանց անկնունք մնացած որդիներին, հաղորդում է և հոգեւորապէս մխիթարում է նրանց:

Այժմ ինչ ասենք այդ մտիկնորին.—Ասենք, թէ դու գնա եղեռնաներին քարոզիր, դու իրաւունք չունես հայերի մէջ մտնելու, հայերը առանց քեզ էլ քրիստոնեայ են, նրանք քրիստոնէութիւնը ընդունեցին այն ժամանակ, երբ ձեր հայրերը Անգլիայում վայրենիներ և կռապաշտներ էին.—Մենք այդ պատասխանը կը տանք մտիկնորին, բայց անաչէր և անհոգիս մնացած հայ ժողովուրդը դարձեալ նրան կընդունէ իր մէջ և մեր խօսքը կը մնայ ձայն բարբառոյ յանապատի...

Հայ ժողովուրդը սիրում էր իր եկեղեցին, նա հաւատարիմ էր մնացել հայրենի աւանդութիւններին, ծնաբահատեալ անձնատուր կը լինի: Բազմութիւնը Մուֆթիին ձեռք անցուել և մաղերէն բռնելն մէկ կընէ, այն ատեն չորս կողմէն կը սկսին զարնել, հայհոյել, թքընել ամբարեն ցորեան կառնուս և ալրաս տաց չենս տար՝ ըսելով: Հուսկ ուրեմն քանի մը մարդիկ միջնորդելով մագապուր կը փախցնեն Մուֆթիին:

Վերջապէս Դատիին տան վրայ վերջին յարձակումն կընեն և առանց վնաս տալու կանցնին: Թէպէտ եղբը իմացանք թէ Դատիի կինն հիւանդացեր է եղեր, և Դատին ալ հրամանատար փաշային գալու ատեն ապատանք է: Մոռացանք ըսել նաև որ հրամանատար փաշան ալ ձիէն վար բերելով ծեծել կուզեն եղեր, բայց նա կը յաջողի փախչիլ:

Զորս ժամ եղբը հասարակութեան մուտնակիը բազմութիւնը ցրուելը Ծանուցանելէն յետոյ, կոգդարարէ որ 85 կարիներ գասուին սոյն գիշեր ամբարներու դռները պահպանելու, որ մի գուցէ զօրքերն գաղտնի կերպով ուրիշ տեղ փոխադրեն, և բազմութիւնն կը ցրուի, հետևեալ առաւօտուն զումարելու պայմանաւ:

Նոյն երեկոյ կառավարիչ փաշան, ընդհանուր դատախազը և Դաւին հեռագրատունն երթալով բանակցութեան կը մտնեն Բաղիշոյ կուսակալին հետ: Այդ գիշերը մեծ տագնապով անցուցին. կառավարութեան դուռը բանտարկեալ 118-ի չափ աւազակներ պահապան զօրաց դիմադրելով կուզեն փախչիլ, բայց զուտ մը զօրք վրայ հասնելով կը զսպէ այդ կատաղիներն:

Հետևեալ առաւօտ (ապրիլ 16) ժամ մէկին մուտներին բարձրաձայն Համայն հասարակութիւնն Տաճկաց գերեզմանոցն կը հրաւիրէ: Այն ատեն Թուրք և Հայ ժողովուրդը հոն զումարելով անմիջապէս, կը խորհրդակցին՝ նախ հեռագրատունը կոխելով, հեռագրական կարևոր գործիքներն ջարդեն և ապա գինեալ կառավարութեան դուռն յարձակին ամբարներն ցիր ու ցան ընելու, առանց վախճանին ակնարկ մը նետելու: Այս խորհրդէն ետքը ոմանք կառավարին ընդհ. դատախազին ապարանքն ուարի առնել, պատճառելով թէ դատախազը Վանեցիները

նա երկար սպասեց իր հովիւներին, երբ տեսաւ, որ նրանք իր վրա ուշադրութիւն չեն դարձնում, որ նրանք իր հոգեւոր պահանջներին բաւականութիւն չեն տալիս,—ստիպված եղաւ ընդունել օտարներին, իսկ մենք, հայ իսլամիզմեցիների ներկայացուցիչներս, վրդովվում ենք այդ երևոյթները տեսնելիս: Եւ եթէ զանվում է մեզանից մէկը, որ աւելի հեռատես է, որ աւելի սուր հայացքով քննում է կատարվող իրողութիւնները,—որ աչխատում է կրօնապէս բաժանված հայերին միացնել ազգային ամբողջութեան հետ, ասելով, թէ հայ կաթոլիկն էլ, հայ բողոքականն էլ, հայ մահմեդականն էլ մեր եղբայրներն են,—մենք ափսոսում ենք մի հրէական մոլեռանդութեամբ նրա ճակատը դրօշմել ուրացութեան կնիքով, ասելով. դու մեղանչում ես եկեղեցու անմատչելութեան դէմ, մենք ազգութիւն չունենք, մեր ազգութիւնը եկեղեցին է.

Ով է ասում լուսաւորչականն. գնա կաթոլիկ դարձիր, գնա բողոքական դարձիր, գնա մահմեդական դարձիր: Ով է քանդում լուսաւորչական եկեղեցին.—Նա ինքն իրան մաչվում է, ժամանակն է մաչում նրան.—Ոչ մի հին չէնք չէ կարող դիմանալ ժամանակների խառնութիւններին, մանաւանդ երբ պահպանողներ և վերանորոգողներ չունեն:

Մեր եկեղեցին քանդվում է մեր եկեղեցականների անհոգութիւնից: Դէրսիմի բազմաթիւ հայերը երկար ժամանակ անհովիւ մնալով, հետզհետէ քուրդ դարձան, Ով էր մեղաւոր: Իսկ Դէրսիմը ոչ Հնդկաստանումն է գտնվում, ոչ Աֆրիկայում և ոչ էլ Աւգանիստանում. Դէրսիմը շատ հեռու չէ Աղիամարայ և Սսի կաթոլիկասարաններից, Ս-րուսաղէմի և Կ. Պոլսի պատրիարքարաններից. Այժմ Դէրսիմի մէջ բողոքականները մտնելով, ըսկսել են քրդացած հայերն Մեսրոպի տառերով Աւետարան կարդացնել, սկսել են մոռացված մայրենի լեզուն սովորացնել նրանց, Ինչ ասենք այդ քարոզիչներին. ասենք, թէ դուք գնացէք հեթանոսներին քարոզեցէք, դուք հայերի հետ գործ չունէք.

Մենք սովորութիւն ունենք հարկաւորած ժամանակ (երբ կամենում ենք մեր խնամակութիւններին մի խարուսկ ձև տալ), հիմնվել Եւրոպայի օրինակների վրա: Եւրոպան չատ սխալներ է գործել իր քաղաքակրթութեան պատմութեան մէջ, և մենք խելացի կը լինենք այն ժամանակ միայն, երբ Եւրոպայի սխալներից օգուտ կը քաղենք, և ոչ թէ կարօրէն կը հետևենք նրանց.

Եթէ ընդունենք (որպէս ոմանք պնդում են) թէ Աւետարանը պէտք է քարոզել հեթանոսներին միայն և ոչ թէ այն ժողովուրդներին, որոնք վաղուց արդէն ընդունել են քրիստոնէութիւնը,—այդ դէպքում այլ ևս Լուսերի բեֆորմացիան հարկաւոր չէր լինի, որ յայտնվեցաւ կաթոլիկ ժողովրդի մէջ, որի եկեղեցին հիմնված էր առաքելների օրերից: Բայց պէտք է վերջին ատոմանի ազէտ լինել և չը հասկանալ, թէ Լուսերի բեֆորմացիան որքան առաջ տարաւ Եւրոպայի քաղաքակրթութիւնը, թէ և բազմաթիւ զոհերի արիւնով գնվեցաւ.

Ամեն մի ազգի միութեան գործը անհնար կը լինի, եթէ նոյն ազգութեան գոյութիւնը պայմանաւորվում է միմեանց կենդանու մէջ,—և եթէ այդ եկեղեցուց դուրս գտնված ցեղակիցները համարվում են ազգային մարմնի ամբողջութիւնից կտրված անդամներ. Հեռու պէտք չէ գնալ. մենք ունենք մեր աչքի առջև մի պարզ և ժամանակակից օրինակ. պանսլաւիզմը ցանկացած յաջողութեանը չը հասաւ, երբ կաթոլիկ չեխյան և Սլավոնական ռուսոֆիլները սկսեցին պահանջել, թէ գանազան սլաւոնական ցեղերին ռուսների հետ միացնելու նպատակին պէտք է ծառայէ օրթոդոքս եկեղեցին: Այդ պահանջը վիրաւորեց միւս սլաւոնների կրօնական զգացմունքը և պանսլաւիզմը մնաց որպէս մի երևակայական իդէա:

Դժբաղդաբար մենք էլ ունենք մեր ողորմելի կաթոլիկները, որոնք լուսաւորչական եկեղեցու մասին նոյն ցնորքների մէջ են գտնվում.

Մենք մեզ թոյլ չենք տալ մեր կաթոլիկ, մեր բողոքական և մինչև անգամ մեր մահմեդական եղբայրների կրօնական համոզմունքներին դիպչել, միայն կաչխատենք զարգացնել նրանց մէջ ազգայնութեան գաղափարը: Մենք կը ցանկանանք, որ նրանք ունենան իրանց ինքնուրոյն և ազատ եկեղեցիները, անկախ Հռոմի պրօպագանդայից և անկախ օտարազգի մխիթարիների և պատարագների ազդեցութիւնից: Մենք կը ցանկանանք, որ նրանք հայոց լեզուով խօսէին, հայոց լեզուով կրթէին իրանց զաւակներին և հայոց լեզուով աղօթէին: Իսկ հալածել նրանց, հերետիկոս համարել և այսպիսով աւելի զզուեցնել և բաժանել մեզանից,—այդ յիմարութիւնը մենք չենք անի: Մենք խորհուրդ կը տանք մեր լրագրութեանը և մանաւանդ Կ. Պոլսի մամուլին հետևել այդ տակտիկային: Անցեալ սխալները պէտք է ուղղել: Այժմ մեզ հայ է պէտք և մեր իդէալը պէտք է լինի հայութիւնը: Կրօնական համոզմունքները պէտք է խանարկվեն այդ գաղափարի առջև...

Բայց զարմանալին այն է, որ դեռ ևս գտնվում են մեր մէջ բանալզոր չունեցող մարդիկ, որ աչխատում են յարուցանել կրօնական վիճաբանութիւններ, մի այնպիսի ժամանակ, երբ մեզ պէտք են աւելի լուրջ և աւելի նպատակայարմար աչխատութիւններ:

Մէլիքզադէ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԲԵՐԼԻՆ, 13/25 Յունիսի: Տիեզերական մանաւանդ ազգամերի և պեռոթիւնների հաւատարմատարների մէջ կատարեալ համաձայնութիւն կայացաւ Էպիրի և Թէսալիայի սահմանական գծի վերաբերութեամբ: Սահմանական նոր գիծը սկսվում է Էպիրում Մեցցովի մօտ և Զագօրեցկայա նահանգը երկու մաս է բաժանում, Պարապոնոնի մօտ Կալամա գետի ափին է հասնում և վերջանում է Կալամա գետի բերանի մօտ: Թէսալիայում սահմանը անցնում է Կանուենիսեան սարերի սարաւանդային ծայրերից դէպի Դիմիրիօն, այդտեղից գնում է Օլիմպիական գագաթներով դէպի Էլյա, այդտեղից իջնում է դէպի Էգէյական Ծովը: Զագօրիցկայա նահանգի 32000 բնակիչներից, սահմանական նոր գծի պատճառով 11,000 բնակիչները Յունաստանին են անցնում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 յունիսի: Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 93 1/8 ր., երկրորդ 92 1/8 ր., երրորդ 93 1/8 ր., չորրորդ 93 1/4 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմակը արժէ 230 ր. 75 կ. երկրորդ 224 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմակը արժէ 91 1/8 ր., երկրորդ 91 3/8 ր., երրորդ 91 1/4 ր., ոսկի 7 ր. 75 կ.: Ռուսաց 1 բուբլ Լոնդոնի վրա արժէ 25 1/32 պէնս, ռուսաց 100 բուբլ՝ Բերլինի վրա 129 մարկ 25 պֆ., Համբուրգի վրա 218 մարկ, 75 պֆ., Փարիզի վրա 268 ֆր. 50 սանտ.: Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 յունիսի: „Новое Время„ լրագիրը հաղորդում է իրրև հաստատ լուր, որ 20 Նաւերի հրամանատար Մեծ Ռվիկանոսի մէջ նշանակվում է Ծովային մինիստրութեան կառավարչ Լէսօվսկի:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ